

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ «ԿՐՈՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՄԱԲՈՏԱԺ» ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐՈՒՄ**

Գեղարվեստական գրականության աղբյուրագիտական արժեքի հարցը պատմաբանների շրջանում գիտական բանավեճի առարկա է հանդիսանում: Որոշ պատմաբան հետազոտողներ գերադասում են ուսումնասիրության առարկային առնչվող գեղարվեստական գործերն ընդհանրապես շրջանցել, կամ էլ դրանց հպանցիկ անդրադառնալ: Պատմագիտական ուսումնասիրությունների ավանդական մոտեցումները կիրառվում են առավելապես իրական փաստերի վերլուծության հիման վրա: Եվ սա բնական է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պատմաբանի առաջնահերթ խնդիրներից է համարվում փաստերի իսկության, դրանց արժանահավատության հարցը: Այս առումով՝ գեղարվեստական գրականության գործերում ստեղծվող երևակայական պատկերները, շատ հաճախ մտացածին իրադարձությունները և դրանց կամայական մեկնաբանությունները, որպես կանոն, չեն համապատասխանում պատմական ուսումնասիրությունների հետազոտական ոգուն և խնդիրներին: Բայց սա, իհարկե, այն դեպքում, երբ խոսքը գնում է հետազոտական ավանդական մոտեցումների և պատմագիտական հետաքրքրության նեղ շրջանակ ներկայացնող հիմնախնդիրների մասին:

20-րդ դարի երկրորդ կեսին եվրոպական պատմագիտության մեջ իսկական հեղափոխություն իրականացրած ֆեկոմենոլոգիական ուղղության հիմնադիրները (Լյուսիեն Ֆեր, Ֆերնան Բրոդել և այլոք) ճանապարհի հարթեցին պատմագիտական

ուսումնասիրությունների և որ ուղղությունների համար, որոնցից մեկն էլ առօրեականության պատմությունն է: Այն հիմնովին փոխեց պատմական իրադարձությունների հետազոտության վերաբերյալ նախկին պատկերացումները: Սկսվեց մեծ կարևորություն հաղորդվել ոչ միայն պատմական փաստերին, այլև պատմական ժամանակաշրջանի ոգուն, իրադարձությունների էմոցիոնալ գնահատականներին: Մովորական մարդն իր կենցաղով, կյանքի պայմաններով, առօրյա ապրումներով դարձավ պատմական ուսումնասիրության օբյեկտ:

Այս համատեքստում փոխվեց նաև պատմագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքի վերաբերյալ մոտեցումը, ընդլայնվեց աղբյուրագիտական բազան: Մտավոր և նյութական գործունեության ցանկացած արգասիք, որ կարող էր պատկերացում տալ նշված հարցերի վերաբերյալ, համարվում էր պատմագիտական հետազոտության լիիրավ սկզբնաղբյուր: Բնական է, որ գեղարվեստական գրականության նմուշներն այս հարցում բացառություն չէին կարող լինել: Եվ թեպետ այս բնույթի սկզբնաղբյուրների նկատմամբ գործում են վերապահումներ, այդուհանդերձ սրանց դերն ու նշանակությունը առօրեականության պատմության ուսումնասիրություններում անգնահատելի է:

Գեղարվեստական գրականության գործերի գիտականության հարցի շուրջ 1960-ականներին գիտական բանավեճ է ծավալվել նաև խորհրդային պատմագիտության մեջ: «Նոր և նորագույն պատմություն» և «ԽՄԿԿ պատմության հարցեր» պարբերականների էջերում ծավալված քննարկումների ընթացքում արտահայտվում էին տարասեռ կարծիքներ այս հարցի շուրջ: Պատմաբանների մի մասը կտրականապես մերժում էր գրական ստեղծագործությունների՝ պատմագիտական սկզբնաղբյուր հա-

մարվելու իրավունքը, իսկ մյուս մասը գտնում էր, որ, օրինակ, կուսակցության պատմաբանն իրավունք չունի անտեսել բոլոր այն սկզբնաղբյուրները, որոնք այս կամ այն կերպ ներկայացնում են կուսակցության բազմաբնույթ գործունեությունը և հասարակության գաղափարական կյանքը<sup>1</sup>:

Հայտնի է, որ Խորհրդային Միությունում մշակույթն ընդհանրապես գտնվում էր կուսակցական մարմինների խստագույն հսկողության ներքո: Գրականությունը հանդիսանում էր կուսակցական գաղափարախոսության տարածման հզոր քարոզչական գործիք, այն նաև հասարակական գիտակցության կառավարման կարևոր միջոց էր: Ըստ այդմ էլ՝ գրական-գեղարվեստական ստեղծագործությունները ենթարկվում էին խստագույն գրաքննության: Եվ այս համատեքստում անհնար կլիներ խորհրդային առօրեականության պատմության համակողմանի ուսումնասիրությունը առանց այդ ժամանակաշրջանի հանրահայտ և ոչ այնքան հայտնի ստեղծագործությունների ուսումնասիրության:

Ենթև, որ խորհրդահայ ստեղծագործողների գրական ժառանգությունը նույնպես անսպառ նյութ է հաղորդում Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության վերաբերյալ: Բազմաթիվ հեղինակներից առանձնացնենք Լեո Կամսարին (1888-1965)<sup>2</sup> հաշվի առնելով նրա ստեղծագործությունների առանձնահատկությունները և խորհրդային վարչակարգի հանդեպ վերաբերմունքը:

Մի քանի տվյալ գրողի կենսագրությունից: Լեո Կամսարը գրական գործունեությունը սկսել է հայրենի Վանում՝ 1910 թ.:

---

<sup>1</sup> Манкевич И. А., Литературно-художественное наследие как источник культурологической информации, [http://www.ifapcom.ru/files/Monitoring/mankevich\\_lit\\_hud\\_nasledie.pdf](http://www.ifapcom.ru/files/Monitoring/mankevich_lit_hud_nasledie.pdf)

1915 թ. ապրիլ-մայիսին երիտասարդ գրողը մասնակցել է Վանի հերոսական ինքնապաշտպանությանը, իսկ ռուսական զորքերի նահանջից հետո գաղթել է և հաստատվել Երևանում: Ուսուցչությանը զուգահեռ՝ Արևելյան Հայաստանում ևս նա շարունակել է զբաղվել գրական գործունեությամբ՝ աշխատակցելով Երևանի, Թիֆլիսի և Բաքվի հայկական թերթերին: Իր ֆելիետոններում գրողն ի ցույց էր դնում հայ հասարակության թերի կողմերը, նուրբ հումորով ծաղրում կուսակցություններին ու տարբեր հայտնի անհատներին: Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք (1918-1920 թթ.) երգիծաբանը պահանջված գրողներից էր: Այդ մասին են վկայում տարբեր թերթերում («Զանգ», «Աշխատանք», «Հայաստանի ձայն» և այլն) նրա տպագրած ֆելիետոն-պատմությունները:

Լեո Կամսարը վկայում է, որ 1920 թ. դեկտեմբերին ողջունել է Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը և ռուսական զորքերի մուտքը Երևան: 1928 թ. սեպտեմբերի 7-ին ՀԿ(բ)Կ կենտկոմին ուղղված նամակում նա գրում էր. «Ես բոլշևիկներու առաջին մուտքը Հայաստան մեծ ուրախությամբ ընդունեցի հիվանդությանս մահճին մեջ: Բժ[իշկ] Գրոյին, որն այդ լուրը կբերեր ինձի, ըսի. «Չափազանց ուրախ եմ: Բոլշևիկներուն ինչ ըլլալը չեմ գիտեր թեև, բայց գիտեմ, որ անհրաժեշտ էր անգամ մը մաքրվեր սա դաշնակցական ճահիճը»<sup>2</sup>: Սակայն Հայաստանի հեղկոմի իրականացրած զանգվածային բռնաճնշումները, ձեռքակալվածների մեջ մեծ թիվ էին կազմում նրա մտերիմները: Ուստի՝ նա ողջունում է 1921 թ. փետրվարի 18-ին հակախորհրդային ուժերի կողմից Երևանի գրավումը, մասնակցում

<sup>2</sup> Մուրխաթյան Հ. Կ., Լեո Կամսարի նորահայտ ֆելիետոնները, «Ամ», 2014, N 3, էջ 214:

բանտարկված գործիչների ազատմանը, ապա՝ բոլշևիկների կողմից բանտում սպանված տասնյակ գործիչների թաղման արարողությանը: Նա աշխատակցում է ապստամբների կազմակերպած ժամանակավոր կառավարության Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ին՝ այդտեղ տպագրելով երկու ֆելիետոն:

1921 թ. ապրիլի 2-ին խորհրդային ուժերի կողմից Երևանը վերագրավելուց հետո բոլշևիկյան վրեժխնդրությունից խուսափելով՝ հազարավոր հայորդիների հետ Լեո Կամսարը նսանցևում է Պարսկաստան և երկու ամիս հաստատվում Թավրիզում: Այստեղ նա վայելում է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի (1866-1948) հովանավորությունը: Մինչև իսկ մայիսի 24-ին Թավրիզի Արամյան թատրոնում հաջողությամբ բեմադրվում է նրա «Կասկածոտ ամուսին» կատակերգությունը:

Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Խորհրդային Հայաստանի իշխանությունները քայլեր ձեռնարկեցին Երևանից ու շրջակայքից հեռացած բնակչությանն իրենց բնակավայրեր վերադարձնելու նպատակով: 1921 թ. ապրիլի 10-ին Հայիեղկոմի հրապարակած «Ներման մասին» ղեկրեստի համաձայն՝ ներում շնորհվեց հակախորհրդային ապստամբության մասնակիցներին՝ բացի Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներից, վերջինի Արտակարգ հանձնաժողովի կողեգիայից, բարձր հրամանատարական կազմից և խմբապետներից, իսկ Հեղկոմի ապրիլի 23-ի «Շնդհանուր ներման մասին» ղեկրեստով վերացվեց նաև այս սահմանափակումը<sup>3</sup>: Շատ մտավորականների թվում հայրենիք վերադարձավ նաև Լեո Կամսարը՝ աշխա-

<sup>3</sup> Շնդհանուր ներման ղեկրեստների և հրամանների ժողովածու, պրակ 2, էջմիածին, 1921, էջ 10-12, 20-21:

տանքի անցնելով «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի երգիծական բաժնում:

Իր սուր գրչի պատճառով երգիծաբանը շատ շուտով դասվեց «անընդունելի հեղինակների» շարքին, ուստի նրա ստեղծագործությունները մեծ դժվարությամբ էին տպագրվում խորհրդահայ մամուլում: Ստալինյան բռնությունների օրերին՝ 1935 թ. նոյեմբերին, ձերբակալվեց նաև Լեո Կամսարը: Նրա դեմ ուղղված հիմնական մեղադրանքներից էր 1918 և 1921 թվականների «դաշնակցական թերթերում» տպած և հակախորհրդային որակված երեք ֆելիետոնները: Դրանք էին՝ 1918 թ. «Հորիզոն» թերթում հրատարակած «Նիկոլայ ցարի նամակը Ուլյանով Լեոնինին», 1921 թ. «Ազատ Հայաստան» թերթում տպագրած «Կրոնների պատմություն» և «Սաբոտաժ» ֆելիետոնները: Առաջինը 2008 թ. վերահրատարակվել է երգիծաբանի «Մտքի և խայտառակ աշխարհ» ժողովածուում, իսկ մյուս երկուսը տեղ չեն գտել նրա ստեղծագործությունների ժողովածուներում: Դրանցում մեծանուն երգիծաբանն իրեն բնորոշ անվրեպ ծաղրով պատկերում է Հայաստանի առօրյան խորհրդայնացմանը հաջորդող առաջին շաբաթներին<sup>4</sup>:

Լեո Կամսարին անդրադառնում ենք հետևյալ պատճառներով: Առաջին՝ ինչպես արդեն նշել ենք, կոմունիստական կուսակցության համար գրականությունը հանդիսանում էր իբրև քարոզչական հզոր գործիք: Լեո Կամսարը այն եզակի հեղինակներից էր, որի գործերը՝ հենվելով մի շարք ստեղծագործությունների վրա, կարող ենք իրավամբ դիտարկել որպես հակաքարոզչություն: Պատահական չէ, որ նա համարվում էր պետության և կուսակցության համար «անբարեհույս» գրող: Երկրորդ՝ Լեո

<sup>4</sup> Մուրխայան Հ., Լեո Կամսարի մոռացված ֆելիետոնները. «Գիտության աշխարհում», 2015, N 1, էջ 20-23:

Կամսարի՝ որոշ դեպքերում շատ նուրբ քողարկված, որոշ դեպքերում՝ բացահայտ քաղաքական սատիրան, ժամանակաշրջանի արատավոր բարբերի հանդեպ դիպուկ ծաղրը ներդաշնակում է խորհրդային իրականության դրվագների վառ նկարագրություններին, ինչը նրա ստեղծագործություններն իսկական բացահայտում է դարձնում առօրեականության պատմաբանի համար: Սույն հողվածում հեղինակի երկու ստեղծագործությունների օրինակով («Կրոնների պատմություն», «Մաքրտաժ») կփորձենք ներկայացնել խորհրդային կյանքի մի քանի դրվագներ, որոնք ոչ միայն նկարագրել է հեղինակը, այլ նաև սրանց վերաբերյալ արտահայտել է իր հետաքրքիր քննադատական մոտեցումները: Նշենք, որ այս ստեղծագործությունները տպագրվել են 1921 թ. փետրվարի 18-ին Երևանում և շրջակայքում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո ապստամբների կազմակերպած ժամանակավոր իշխանության՝ Հայրենիքի փրկության կոմիտեի «Ազատ Հայաստան» պաշտոնաթերթի 2 համարներում:

«Կրոնների պատմություն»<sup>5</sup> ֆելիետոնում հեղինակը դիպուկ ծաղրի է ենթարկում Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո հանրապետության ներքաղաքական իրավիճակը: Սոցիալ-դեմոկրատների, սոցիալիստ-հեղափոխականների, ՀՅԴ կուսակցություններում քաղաքական խմորումները (Հայ ժողովրդական կուսակցությունն ու հայ ռամկավարները ընդհանրապես լռել էին), ճամբարափոխության դրվագները իր սուր գրիչով Լեո Կամսարը համեմատում է վերամարմնավորման («ոեինկարնացիա») ավանդույթի հետ, որը տարածված էր հիւնարնեյան բազմաթիվ կրոնական ուսմունքների մեջ («Աջ դաշ-

<sup>5</sup> «Ազատ Հայաստան», Երևան, 10 մարտի 1921, N 17:

նակցական մը կոմունիստ դառնալու համար նախ պիտի ձախ ըլլա, հետո դառնա ետև՝ Աջ դաշնակցությանը, այսինքն՝ իր նախկին կերպարանքը հայիոյե, ապա քայլերն ուղղե դեպի կոմունիզմը»): Այստեղ հեղինակին հաջողվել է յուրօրինակ ստեղծագործական հնարքի միջոցով վեր հանել ոչ միայն հասարակության քաղաքական համակարգում տեղ գտած արատները, այլև մարդկային հոգու արատներ, որոնք կարելի է տեսնել ֆելիետոնի ենթատեքստում: Այսպես՝ հղում անելով կրոնի պատմությանը՝ հեղինակը կուսակցական պատկանելիությունն ըստ էության նույնացնում է հավատամքի հետ, և այդ հավատամքը չտեսնելով ժամանակի կուսակցական գործիչների մեջ՝ նրանց ճամբարափոխության ձգտումը հեզևանքով համեմատում է վերամարմնավորման հետ: Գաղափարական անսկզբունքայնությունից գատ՝ ֆելիետոնում կարող ենք դիտարկել նաև պաշտոնամոլության և թուլամորթության սուր քննադատություն, երևույթներ, որոնք տարածված էին և՛ 1920-ականներին, և՛, հատկապես, 1930-ականներին:

Խորհրդային Հայաստանում իրականացվող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որը հաճախ ուղեկցվում էր բուլշևիկ գործիչների ամենաթողության հասնող քայլերով, խոր դժգոհություն առաջացրեց բնակչության շրջանում: Այդ օրերին կոմունիստների մասին ժողովրդական լայն խավերի ընկալումն արտացոլված է Լեո Կամսարի «կոմունիստներն են երկրային դրախտի միակ ժառանգները» տողերում:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը հաջորդող օրերին Հ. Յ. Դաշնակցության ձախ թևի՝ «ձախ ինտերնացիոնալիստ դաշնակցականների» խմբի մի քանի տասնյակ անդամներ Հայաստանի կոմկուսի մեջ ընդգրկվելու կամ նրա



հետ համախորհուրդ գործելու փորձեր կատարեցին<sup>6</sup>։ Սակայն նրանցից ոչ բոլորի առջև կոմկուսը «կանաչ լույս» վառեց։ Այս վերջիններն արժանացան նաև մայր կուսակցության անդամների պարսավանքին։ Այս հանգամանքը, արևելյան հավատալիքների հետ համեմատելով, Լեո Կամսարը պատկերավոր կերպով հեզնում է. «Հին Եզիպտոսին մեջ այն հոգիները միայն այս վիճակին կենթարկվեին, որոնք իրենց մարդկային մարմինեն ելնելով, սխալմամբ ջորիի մը մեջ կմտնեին ...»։

Հաջորդ «Սարտած»<sup>7</sup> ֆելիետոնում Լեո Կամսարն անդրադարձել է խորհրդային մարդկանց կյանքի այնպիսի զգայուն կողմի, ինչպիսին ընտանիքն ու ընտանեկան հարաբերություններն են։ Խորհրդային ընտանիքն ուներ իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին կոմկուսի ամբողջատիրական բնույթով և հասարակական հարաբերությունների վրա նրա գաղափարական ազդեցություններով։ Հեղինակը ֆելիետոնում ներկայացնում է ընտանեկան փոքրիկ մի վեճ, որի միջոցով կարողանում է ցույց տալ նշված ազդեցությունները։ Ֆելիետոնի հենց սկզբում Լեո Կամսարն արտահայտում է իր վերաբերմունքը կոմկուսի նկատմամբ. «Շնկեր Մեսրոպը գեշ կնիկ մը ուներ։ Մաստիկ գեշ, բոլշևիկյան գործերուն չափ գեշ»։ Հեղինակն սկսարկում է ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որն իսկական պատուհաս էր դարձել հասարակության համար։ Ֆելիետոնի հետագա տեքստը, ըստ էության, ընտանեկան հարաբերությունների կարգավորման՝ կուսակցության քաղաքականության նկարագրությունն է այն տրամաբանությամբ, որն իր ուսումնասիրության մեջ այսպես է ձևակերպում Սվետլանա Այ-

<sup>6</sup> Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Երևան, 2005, էջ 334-335։

<sup>7</sup> «Ազատ Հայաստան», Երևան, 16 մարտի 1921, N 21։

վագուվան. «Բուլժնիկները դարձան պատմության մեջ երևի թե միակ պետության ղեկավարները, որոնք ստեղծում էին իրենց հասարակարգը՝ վերակառուցելով մարդկային հիմնարար հարաբերությունները՝ սոցիալական հարաբերությունները սեռերի միջև»<sup>8</sup>:

Լեո Կամսարն իրեն հատուկ ոճով ծաղրում է ընտանիքի «բուլժնիկյան» մոդելը: Ամուսիններն իրար դիմում են բուլժնիկյան ոճով («ընկեր մարդ», «ընկեր կնիկ»), կինը ամուսնուց սեր է պահանջում՝ սպառնալով հակառակ դեպքում դիմել ամենագոր «Չեկա»-ին՝ Արտակարգ հանձնաժողովին: Միջանկյալ նշենք, որ 1920-1930-ական թվականներին բավականին տարածված երևույթ էր ընտանեկան խնդիրների լուծման խնդրանքով պետական և կուսակցական մարմիններին դիմելը: Ի դեպ, այս հարցում առավել ակտիվություն էին ցուցաբերում կանայք: Պատճառն այն էր, որ կոմկուսն իր քաղաքականության մեջ մեծ տեղ էր հատկացնում կանանց իրավունքների պաշտպանությանը, նրանց հասարակական ակտիվության բարձրացմանը և կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված հարցերին: 1921 թ. մայիսին Երևանի «Կոմունիստ» թերթում տպագրված Խորհրդային Հայաստանի բոլոր աշխատավոր կանանց ուղղված կուսակցական կոչում ազդարարվում էր «ստրկացնող ու կաշկանդող հին բուրժուական օրենսդրությունից» նրանց ազատագրման և տղամարդկանց հետ իրավահավասարության մասին<sup>9</sup>: Պատահական չէ, որ այս տարիներին կանայք հաճախ էին նամակներ ուղարկում կուսակցական մարմիններին, որոնցում ամենատարբեր հաճախ զավեշտի հասնող խնդրանքներ կային՝ վերադարձնել ընտանիքից հեռացած ամուսնուն, ազդել սկեսրայրի կամ սկես-

<sup>8</sup> Айвазова С., Гендерное равенство в контексте прав человека, Москва, 2001, <http://owl.ru/win/books/gender/index.htm>

<sup>9</sup> «Կոմունիստ», Երևան, 19 մայիսի 1921, N 86:

րոջ վրա, վերջ տալ ամուսնու սիրուհիների հետ կապին և այլն<sup>10</sup>:

Կուսակցական բառապաշարի օգտագործումն ամուսինների կողմից նույնպես իրական հիմքեր ունի (կինն ամուսնուն մեղադրում է «սաբոտաժի» (նենգադուլի) մեջ, ամուսինը վախենում է «Չեկա» բառը լսելիս, իր հավատարմությունն ապացուցելու համար վկայակոչում է «Ցեկան» (կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն) և այլն): 1920-1930-ականներին խորհրդային քաղաքացիները հաճախ էին փորձում երևալ քաղաքական գրագիտությամբ, նմանատիպ արտահայտություններով համեմում էին իրենց խոսքը կամ էլ դրանք օգտագործում էին իշխանության մարմիններին ուղղված իրենց նամակներում («սկլոկա», «սաբոտաժ», «կուսակցական խիղճ», «վնասարարություն», «բյուրոկրատիզմ» և այլն):

Առհասարակ, խորհրդային հասարակության մեջ կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության հետևանքով հասարակական հարաբերություններում առկա էր յուրօրինակ քաղաքականացված մթնոլորտ, որը կարող էր դրսևորվել ամենաանհավանական թվացող իրավիճակներում (ընտանեկան վեճեր, հարևանների միջև վեճեր և այլն) և այդ քաղաքականացվածությունը կարող էր դրսևորվել ամենաանսպասելի մարդկանց մեջ: Թեպետև Լեո Կամսարի նշված ֆելիետոնը գրվել է 1921 թ., սակայն նկարագրված իրադարձությունները խիստ բնորոշ են նաև 1930-ականների իրողություններին: Օրինակ՝ Նոր Բայազետի Նորադուզ գյուղում 1937 թ. Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ լուրջ լարվածություն է առաջանում պատգամավորության երկու կին թեկնածուների

<sup>10</sup> Այսօրինակ նամակներ կարելի է տեսնել Հայաստանի ազգային արխիվի 91-րդ ֆոնդում:

միջև: Երբ կուսակցության ներկայացուցիչը փորձում է վեճը հարթելու միջոցներ գտնել, թեկնածուներից մեկի տասամյա որդին «...սկսում է սպառնալ կցված ընկերոջը, որ վերջինս ճնշում է քննադատությունը, պահանջում է, որ նա ասի իր անուն ազգանունը, որպեսզի մատերիալ գրի նրա վրա»<sup>11</sup>: Տվյալ ժամանակաշրջանի բարքերին բնորոշ զավեշտ է այն փաստը, որ տասամյա երեխան կարող էր ոչ միայն պատկերացում ունենալ քննադատության մասին, այլ նաև իր մորը փորձեր պաշտպանել «մատերիալ» (մատնագիր, վարկաբեկող նյութ) գրելով:

Վերը բերված օրինակները շատ են և ապացուցում են մի փաստ: Խորհրդային հասարակության ներսում մասնավոր բնույթի հարաբերությունների վրա առկա էր կոմունիստական կուսակցության գաղափարական աշխատանքի կնիքն ու ազդեցությունը, ինչն այս հարաբերությունները հանրայնացնելու միտում էր ստեղծում: Եվ այս երևույթն իր ստեղծագործություններում սուր քննադատության է ենթարկում Լեո Կամսարը: Իհարկե, հեղինակի սուր գրիչն ուղղված չէ միայն ընտանեկան կամ այլ մասնավոր բնույթի հարաբերություններին: Լեո Կամսարի երգիծանքը վերաբերում է խորհրդային կյանքի բոլոր բացասական կողմերին՝ բյուրոկրատիզմ, պաշտոնական դիրքի չարաշահումներ և այլն: Լեո Կամսարը, ըստ էության, համարվում է Խորհրդային Հայաստանի՝ առօրեականության պատմության յուրօրինակ վավերագրողներից մեկը, որի ստեղծագործությունները, կարծում ենք, իրավունք ունեն համարվել նշված ժամանակաշրջանի առօրեականության պատմության կարևոր սկզբնաղբյուրներ: Իսկ մեր կողմից քննության նյութ դարձած երկու ֆելիետոնը պայմանական կերպով կարող ենք համարել Խորհրդային Հայաստանի առօրեականությունը պատկերող առաջին օրինակները:

<sup>11</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 101, թ. 34.

АМО СУКИАСЯН,  
ГАГИК ЖАМГАРЯН

ОЧЕРКИ ПОВСЕДНЕВНОСТИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В  
ФЕЛЬЕТОНАХ ЛЕР КАМСАРА "ИСТОРИЯ РЕЛИГИЙ" И  
"САБОТАЖ"

РЕЗЮМЕ

В статье рассматриваются описания повседневности Советской Армении в фельетонах известного армянского прозаика Лера Камсара «История религий» и «Саботаж». С помощью краткого анализа фельетонов авторы статьи пытаются обосновать важное историко-литературное значение литературно-художественных произведений в современных направлениях исторических исследований.

HAMO SUKIASYAN,  
GAGIK ZHAMKHARYAN

FEATURES OF EVERYDAY LIFE OF SOVIET ARMENIA IN THE  
FEUILLETONS "HISTORY OF RELIGIONS" AND "SABOTAGE" BY  
LER KAMSAR

SUMMARY

The article touches upon the descriptions of everyday life in Soviet Armenia reflected in feuilletons "History of Religions" and "Sabotage" authored by famous Armenian writer Ler Kamsar. Due to brief analysis of these feuilletons the authors of the article try to substantiate the importance of source value of literary and artistic works in modern historical research directions.